ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ 50 ՏԱՐՈՒՄ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ինստիտուտի դիրեկտոր

Հայ ժողովրդի տնտեսագիտական միտքը ճնագույն պատմություն ունի: Սակայն մինչև սովետական իշխանության հաստատումն այն զարգանում էր տարերային կերպով և հիմնականում՝ բուն Հայաստանի սահմաններից դուրս: Հայ տնտեսագիտությանն առանձնապես խոշոր ծառայություններ են մատուցել միջնադարի մտածողներ Մխիթար Գոշը, Գրիգոր Տաթևացին, լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչներ Նիկողայոս Զորայանը, Գրիգոր Արծրունին, Ավետիք Առաստխանյանը: Դեմոկրատական տնտեսագիտական մտքի ներկայացուցիչը հայ իրականության մեջ հանդիսացել է Խաչատուր Աբովյանը. իսկ հեղափոխական-դեմոկրատական տնտեսագիտական մտքինը՝ Միքայել Նալբանդյանը:

Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը շրջադարձային կետ էր տնտեսագիտության մեջ: Մարքսիստական առանձին աշխատություններ հայ մտավորականությանը հայտնի էին դեռ Մարքսի ու Էնգելսի կենդանության օրոք: Հայ հեղափոխական մարքսիստները XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ տնտեսագիտական միտքը բարձրացրին նոր աստիճանի: Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Կասյանը, Ա. Մելիքյանը և ուրիշներ հանդես եկան ոչ միայն որպես մարքսիստական ուսմունքի տաղանդավոր պրոպագանդիստներ, այլև իրենց աշխատություններում, ելնելով Անդրկովկասի և Հայաստանի կոնկրետ պատմական պայմաններից, մեկնաբանեցին ու կիրառեցին Կ. Մարքսի տնտեսական ուսմունքի բազմաթիվ դրույթներ՝ դառնալով հայ մարքսիստական տնտեսագիտության փայլուն ռահվիրաները:

Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին Հայաստանում տնտեսագիտության պրոբլեմներով զբաղվել են կուսակցական ու պետական գործիչներ Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Ս. Սրապիոնյանը, Հ. Ագաթյանը, Ա. Գուլոյանը և ուրիշներ: Անցման ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրներին նվիրված նրանց աշխատությունները, հրապարակախոսական հոդվածները որոշակի ավանդ են հայ տնտեսագիտության մեջ: Մինչև 30-ական թվականների կեսերը հանրապետության տնտեսագիտական միտքը հիմնականում ուղղված էր ժողովրդական տնտեսության վերականգնման ու վերակառուցման, սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ու ամրապնդման նպատակին: Այդ տարիներին հայ տնտեսագետների մենագրություններն ու հոդվածները նվիրվում էին տնտեսական հաղթականության, գյուղատնտեսության կոլեկտիվացման, հանրապետության տնտեսական զարգացման և այլ հարցերի: Թ. Ավդալբեկյանը, Ն. Ստեփանյանը, Վ. Կոս-

տանյանը և ուրիշներ իրենց աշխատություններում ու հոդվածներում մեկնաբանում էին Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը:

Սակայն մինչև 1940 թ. գոյություն չուներ տնտեսագիտական հետազոտությունների որևէ օջախ: Չկային ոչ միայն գիտա-հետազոտական աշխատանքները լայն մասշտաբներով ծավալելու նախադրյալներ ու հնարավորություններ, այլև անհրաժեշտ մասնագետներ: Նրանք ոչ մեծ թվով տնտեսագետ կադրերն աշխատում էին պլանային մարմիններում, Երևանի համալսարանում և նախագծային ու գերատեսչական առանձին կազմակերպություններում:

Հանրապետությունում տնտեսագիտական առաջին օջախը՝ ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնտեսագետների խումբը, ստեղծվել է 1940 թ.: Դրա հիման վրա, հաջորդ տարում, կազմակերպվում է ինքնուրույն տնտեսագիտական սեկտոր՝ արդյունաբերության, գյուղատնտեսության էկոնոմիկայի և բարտեզագրական լաբորատորիայի խմբերով: 1943 թ. Հայկական ՍՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիան իր կազմի մեջ է ընդգրկում նաև տնտեսագիտության սեկտորը, որը 1955 թ. վերակազմվեց տնտեսագիտության ինստիտուտի:

Ինստիտուտը միավորում էր բաղաբատնտեսության, արդյունաբերության էկոնոմիկայի և գյուղատնտեսության էկոնոմիկայի բաժինները: Հետագայում մի շարք նոր բաժինների՝ տնտեսական կոմպլեքսային պրոբլեմների, կապիտալ ներդրումների արդյունավետության, արդյունաբերության տեղաբաշխման, տնտեսական հաշվարկի և նյութական խթանման, աշխատանքի էկոնոմիկայի, տնտեսագիտական-մաթեմատիկական հետազոտությունների, ժողովրդական տնտեսության և տնտեսագիտական մտքի պատմության բաժինների կազմակերպումով հիմք է դրվում և բեղմնավոր գիտահետազոտական գործունեություն ծավալվում համանուն պրոբլեմներով: Հարստանում է նաև ինստիտուտի նյութա-տեխնիկական բազան:

Իր գոյության տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտն զգալի աշխատանք է կատարել հանրապետության ժողովրդական տնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ տարիների ընթացքում ինստիտուտի գիտաշխատողները հրատարակել են բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ, որոնք ընդգրկում են տնտեսագիտական հարցերի բավականին լայն շրջանակ:

Ինստիտուտի կազմակերպման առաջին տարիներին գիտական հետազոտությունները հիմնականում ենթարկված էին հանրապետության տնտեսական հարցերի լուսաբանմանը և ընդգրկում էին նյութային էկոնոմիկայի, մասնավորապես արդյունաբերական ձեռնարկությունների էկոնոմիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության և արտադրության տեղաբաշխման հարցերը: Հետագայում, դրան հետ միասին, լուրջ ուշադրություն դարձվեց Հայաստանի և հարևան հանրապետությունների մեքենաշինական ձեռնարկությունների մասնագիտացման, կոոպերացման, հանրապետությունում ձուլման արտադրության կազմակերպման, ներարտադրական ռեզերվների բացահայտման և օգտագործման խնդիրներին:

60-ական թվականների հենց սկզբից ինստիտուտի գիտական հետազոտությունների թեմատիկան համապատասխանեցվում է ՍՄԿԿ XXII համագումարի և ապա XXIII համագումարի ու ՍՄԿԿ սեպտեմբերյան (1965 թ.) պլենումի կողմից տնտեսագիտության առջև դրվող նոր պահանջներին:

Ուսումնասիրության առարկա են դառնում հանրապետության արտադրության հյուղային կառուցվածքի բարելավման, տեխնիկական առաջընթացի, հիմնական ֆոնդերի և կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացման, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, արտադրողական ուժերի տեղաբաշխման, ժողովրդական տնտեսության պլանավորման կատարելագործման և արտադրության նյութական խթանման ուղղությամբ կատարվող հետազոտությունները:

Ինստիտուտում կարևոր տեղ են գրավում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափությունների բացահայտման պրոբլեմները: Լույս են տեսել բազմաթիվ մենագրություններ՝ նվիրված սոցիալիստական վերարտադրության տեսության, սոցիալիստական հասարակության ազգային եկամտի, սոցիալիզմի տնտեսական կատեգորիաների, ապրանքային արտադրության, աշխատավարձի, պլանավորման, ինդուստրացման, սոցիալիստական արդյունաբերության տեղաբաշխման պրոբլեմներին: Այս տարի Վլադիմիր Իլյիչի ծննդյան 100-ամյակի տոնակատարության նախօրյակին ինստիտուտի մի խումբ գիտաշխատողների ուժերով լույս ընծայվեց «Սոցիալիստական վերարտադրության լենինյան ուսմունքը» ծավալուն ուսումնասիրությունը:

Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման վերաբերյալ առանձնապես կարևոր են հանրապետության հանքային ռեսուրսների տնտեսական գնահատման ուղղությամբ կատարված աշխատանքները: Հինգ տարի առաջ ինստիտուտում ավարտվեց «Հայկական ՍՍՀ հանքային ռեսուրսները և դրանց տնտեսական գնահատումը» թեման, որի հիման վրա ստեղծվեց հանրապետության ընդերքի առաջին բառանատոր ատլասը: Շատ հետազոտություններում ընդհանրացվել է Հայաստանի արտադրողական ուժերի տեղաբաշխման վիճակը, մշակվել են հանձնարարականներ հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության նոր ձեռնարկությունների տեղաբաշխման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

Մեր գիտնականները բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել նաև հանրապետության ժողովրդական տնտեսության գլխավոր սխեմայի կազմման, Հրազդանի արդյունաբերական հանգույցի հիմնավորման, ժողովրդական տնտեսության հյուղերում զբաղվածության բարձրացման, արտադրության կառավարման բարելավման, տեխնիկական առաջադիմության, տնտեսական հաշվարկի և նյութական շահագրգռվածության բարձրացման, Հայաստանի ժողովրդական տնտեսության և հայ տնտեսագիտական մտքի պատմության ու բազմաթիվ այլ կոմպլեքսային պրոբլեմների մշակման ուղղությամբ:

Ելնելով հանրապետության հասարակական արտադրության կառուցվածքը բարելավելու անհրաժեշտությունից, ինստիտուտում ժամանակի ընթացքում ծավալվեցին հետազոտություններ հաշվեկշիռներ կազմելու ուղղությամբ: ՀՍՍՀ ԿՎՎ-ի հետ մեկտեղ կազմվեցին հանրապետության հասարակական արդյունքի արտադրության ու բաշխման 1963 թ. և 1966 թ. միջհյուղային հաշվեկշիռները: Կազմվեց նաև հիմնական ֆոնդերի միջհյուղային հաշվեկշիռ: Դրանց հիման վրա ավարտված ուսումնասիրություններում ու հրատարակած աշխատություններում բացահայտվում են ժողովրդական տնտեսության կարևորագույն համամասնությունները ու միջհյուղային կապերը:

Մեր տնտեսագետների հետազոտություններում նշանակալի տեղ են գրա-

վում հիմնական ֆոնդերի և կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման հարցերը: Առանձնապես վերջին տասնամյակում ժողովրդական տնտեսության այդ կարևորագույն պրոբլեմը դարձել է ինստիտուտի թեմատիկայի հիմնական բաղկացուցիչ մասերից մեկը: Տեսական և փաստական նյութերի ընդհանրացման հիման վրա ցույց է տրվում հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության մակարդակի կախվածությունը նրանց առանձին մասերի ու տարրերի փոխադարձ հիշտ կապերից, բացահայտվում են ֆոնդահատույցի և ձեռնարկություններ, նյուղերի ու վերարտադրության մյուս օղակների կառուցվածքի միջև գոյություն ունեցող բազմազան կապերը: Հրատարակված մի շարք աշխատություններում լայնորեն ընդարկվել են հիմնական ֆոնդերի վերարտադրության պլանաչավությունն ապահովելու, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդների ու դրանց բարձրացման ուղիների բացահայտման խնդիրները:

Ինստիտուտի գիտա-հետազոտական թեմատիկայում կարևոր տեղ է զբաղեցրել հանրապետության բնակչության վերարտադրության և հանրային արտադրության մեջ աշխատանքային ռեսուրսների զբաղվածության բարձրացման ու օգտագործման բարելավման պրոբլեմը: Մինչև 1985 թ. հանրապետության բնակչությունը սեռա-հասակային կառուցվածքով կանխատեսելու հետ մեկտեղ մշակվել են աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռներ, ուր առաջարկվում և գիտականորեն հիմնավորվում են աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ զբաղվածության և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները: Տարվում են սոցիոլոգիական բնույթի մի շարք հետազոտություններ զբաղվածության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Գիտական և գործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում մինչև 1985 թ. հեռանկարային ժամանակաշրջանի համար հանրապետության ժողովրդական տնտեսության ամփոփ ցուցանիշների տարբերակների մշակումը, որ կատարվել է ժամանակակից տեխնիկայի՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ:

Ինստիտուտում տարվող գիտական հետազոտություններից մյուսը, որ հատկապես լայնորեն ծավալվեց ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1965 թ.) պլենումի որոշումների լույսի ներքո՝ արտադրության մեջ տնտեսաշվարկի և նյութական շահագրգռվածության բնագավառում տարվող հետազոտություններն են: Տեխնիկական առաջադիմության նյութական խթանման համալիր հարցերի ուսումնասիրությունը զուգակցվել է արտադրության կարևորագույն ճյուղերում՝ հիմնական ֆոնդերի տնտեսաշվարկային խթանների ուսումնասիրության հետ: Այդ պրոբլեմին նվիրված աշխատություններում լուսաբանվում են արդի գիտատեխնիկական առաջադիմության և նրա խթանման հանգուցային հարցերը: Մեթոդական և գործնական բնույթի մեծ աշխատանքներ են կատարվել պլանավորման նոր սիստեմին անցած արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական կապերի կատարելագործման ուղղությամբ:

Արդյունավետ հետազոտություններ են կատարվել և հրատարակվել են աշխատություններ քաղաքատնտեսության բազմազան պրոբլեմների, սոցիալիզմի տնտեսական զարգացման տեսության, հանրապետության հողային ֆոնդի օգտագործման, հողի տնտեսական գնահատման, գյուղատնտեսության մեջ գնագոյացման և սոցիալիզմի ժամանակ դիֆերենցիալ ռենտայի, գյուղատնտե-

սության զարգացման տեմպերի ու տեղաբաշխման, ինչպես նաև հայ տնտեսական մտքի և Հայաստանի ժողովրդական տնտեսության պատմության մի շարք պրոբլեմների վերաբերյալ:

Ինստիտուտում ուշադրություն է նվիրվում տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման խնդրին: Մաթեմատիկական մեթոդների կիրառումով լուծվել են հանրապետության էկոնոմիկայի պլանավորման, մասնավորապես հեռանկարային և օպտիմալ պլանավորման մի շարք խնդիրներ:

Տնտեսագիտության զարգացման կարևոր ցուցանիշներից մեկն էլ տնտեսագետ կադրերի պատրաստումն է: Առանձնապես վերջին տասնամյակում ինստիտուտն այդ ուղղությամբ կատարել է զգալի աշխատանք. 1940 թ. 3-ի փոխարեն ներկայումս ինստիտուտի գիտաշխատողների թիվը հասնում է 40-ի, այդ թվում՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեկ ակադեմիկոս, գիտության 4 դոկտոր և 25 թեկնածու: Միայն վերջին մեկ տարվա ընթացքում ինստիտուտի յոթ աշխատակիցներ պաշտպանել են թեկնածուական, իսկ մեկը՝ դոկտորական դիսերտացիա: Միաժամանակ մեծ չափով ավելացել է ինստիտուտի ասպիրանտների թիվը: Ինստիտուտը պատրաստել է մեծ ճանակությամբ բարձրորակ կադրեր բուհերի և գիտական հիմնարկների համար: Գիտական կադրերի աճին զգալիորեն նպաստում է 1968 թ. ինստիտուտում ստեղծված գիտական աստիճաններ շնորհող խորհուրդը:

Մեր ինստիտուտի կոլեկտիվի գործունեությունը, սակայն, չի սահմանափակվում հանրապետության շրջանակներով: Վերջին տարիների ընթացքում գնալով ավելի ու ավելի է ամրապնդվում ինստիտուտի և միութենական ու հանրապետական տնտեսագիտական մյուս ինստիտուտների ու գիտական հիմնարկությունների կապը: Դրանք մեծ չափով նպաստում են ինստիտուտին կից գործող այնպիսի պրոբլեմային և կոորդինացիոն խորհուրդներ, ինչպիսիք են՝ հիմնական ֆոնդերի, կապիտալ ներդրումների ու նոր տեխնիկայի տնտեսական արդյունավետության ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, օպտիմալ պլանավորման և ժողովրդական տնտեսության կառավարման գիտական խորհրդի հայկական տերիտորիալ սեկցիան, տնտեսագիտական հետազոտությունների կոորդինացման խորհուրդը և այլն:

Ինստիտուտը սիստեմատիկ կապ է պահպանում Միության զանազան գիտական հիմնարկությունների ու կազմակերպությունների հետ: Հաճախ Երևանում, ինստիտուտի նախաձեռնությամբ, հրավիրվում են տնտեսագիտության հրատապ պրոբլեմներին նվիրված գիտական նստաշրջաններ, կոնֆերանսներ, սեմինարներ ու խորհրդակցություններ, որոնց աշխատանքներին մասնակից են դարձվում ինչպես միութենական, այնպես էլ մյուս հանրապետությունների տնտեսագետ գիտնականներ, ժողովրդական տնտեսության ղեկավարներ ու մասնագետներ: Վերջին մի քանի տարիներին Երևանում կազմակերպված համամիութենական մասշտաբի նման միջոցառումները նվիրվել են մասնագիտացման ու կոոպերացման, հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության ու բաշխման գծով հաշվեկշռային հաշվարկների, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման ու ժողովրդական սպառման պրոբլեմի ուսումնասիրության և այլ հարցերի: Ինստիտուտի գիտնականներն իրենց հերթին սիստեմատիկաբար մասնակցում են

տնտեսագիտության կարևոր խնդիրների ննարկմանը նվիրված համամիութենական բազմաթիվ միջոցառումների:

Մի շարք աշխատանքներ, որոնք կատարվել են մեր ինստիտուտում, ձեռք են բերել համամիութենական ճանաչում. Դրանք օգտագործել են կենտրոնական պլանավորող օրգանները, տնտեսական կազմակերպությունները և գիտահետազոտական հիմնարկները: Բացի այդ, ինստիտուտի առանձին գիտնականների աշխատություններ թարգմանվել են օտար լեզուներով և լույս են տեսել ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Շվեյցարիայում, Հնդկաստանում, ԱՄՀ-ում և սոցիալիստական երկրներում:

Այդ աշխատությունների հիմնական բովանդակությունը սոցիալիզմի բաղաքատնտեսության, ճարցերն են, մասնավորապես, հիմնական ֆոնդերի վերարտադրության, արտադրության կառավարման, տնտեսական հաշվարկի տեսությունները:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը տնտեսագետների առջև խնդիր են դրել տեսական բնույթի հարցերի հետ միասին առանձնահատուկ ուշադրություն նվիրել ժողովրդական տնտեսության կոնկրետ պրոբլեմների գիտական հետազոտություններին: ՍՄԿԿ XXIII համագումարը նշեց, որ ներկա էտապում անկարելի է ապահովել արտադրողական ուժերի աճի, տեխնիկական առաջադիմության բարձր տեմպեր՝ առանց գիտական լայն հետազոտությունների և արտադրության մեջ դրանց արդյունքների արագ ներդրման: Դրա շնորհիվ վերջին ժամանակներս զգալիորեն բարելավվել է մեր ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան: Ինստիտուտի աշխատանքներում զգալի տեղ են գրավում ՍՍՀՄ պետպլանի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, ինչպես նաև հանրապետության պլանավորող և տնտեսական օրգանների առաջարկած թեմաները: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունը դարձել է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման այժմեական պրոբլեմների մշակումը:

ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտը, որ դարձել է հանրապետության տնտեսագիտական մտքի կենտրոնը, գիտական հետազոտությունները ծավալում է հետևյալ ուղղություններով. գիտատեխնիկական առաջընթացը, արտադրության նյութային կառուցվածքի տեղաշարժերը, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման եղանակները և արտադրության աճի նյութական խթանումների գործոնները: Ուսումնասիրվում և լուծվում են երկրում իրականացվող տնտեսական ռեֆորմի հետ կապված այնպիսի պրոբլեմներ, ինչպիսին են ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանավորման զուգակցումը տնտեսաշվարկային ձեռնարկությունների պլանավորման, նյութական շահագրգռվածության բարձրացման, պլանավորման կատարելագործման հետ: Միաժամանակ ինստիտուտի թեմատիկայում մեծ տեղ են գրավում տնտեսագիտության տեսական հարցերի, Հայաստանի ժողովրդական տնտեսության և տնտեսագիտական մտքի պատմության պրոբլեմները:

Մեր գիտնականները չեն հանգստանում ձեռք բերած նվաճումներով: Ինստիտուտի կոլեկտիվը Հայաստանում սովետական կարգերի հաստատման երկրորդ հիսնամյակը դիմավորում է գիտական ավելի արդյունավետ հետազոտություններ կատարելու հաստատ վճռականությամբ: